ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<20>> հունվարի 2025թ. N ՄՈ/147 -Ա

ք. Արմավիր

«ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Սուսաննա Հարությունյանի 2025 թվականի հունվարի 16-ի գրությունը.

որոշում եմ՝

1. «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Սուսաննա Հարությունյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի չօգտագործված մասը՝ 6 աշխատանքային օր տևողությամբ և 2024-2025 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 3 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հունվարի 20-ից 31-ը ներառյալ՝ 9 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Սուսաննա Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մերձավանի միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Անուշ Ասատրյանին:
3. 2025 թվականի հունվարի 20-ից 31-ը ներառյալ «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական

աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Անուշ Ասատրյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Սուսաննա Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի փետրվարի 3-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-01-20 09:26:34 GMT+4
Հավաստման ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**